№ 101 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 5 **1899** ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 5 № 101

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ **1899** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՑՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՑՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ»; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Բայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր կարգադրութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Կաղզուանից. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դրամական տագնապը Պարսկաստանում։

ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

—

Անդրկովկասի այն ճանապարհները, որոնք ձգված են երկաթուղու գծի երկարութեամբ, ծառայում էին մինչև այժմ թէ մարդկանց երթևեկութեան և ապրանքներ փոխադրելու և թէ տնային անասունների տեղափոխութեան համար։ Այժմ, իշխանութեան կարգադրութեամբ, արգելվեց այդ ճանապարհներով անասուններ տեղափոխելը։ Ցանկացողը պէտք է իր անասուններին դնի երկաթուղու վագոնների մէջ և այնպէս փոխադրի տեղից տեղ։ Այդ կարգադրութեան շարժառիթն է կղզուացնել անասունների ժանտախտը և թոյլ չը տալ, որ նա վարակի ուրիշ տեղերի կենդանիներին։ Այդ մի և նոյն միջոցը գործադրվել է Ռուսաստանի ներքին նահանգներում և տուել է բարերար հետևանքներ։ Անկասկած, նա նոյնպիսի արդիւնք կը տայ և մեր երկրում, եթէ միայն ուշադրութեան առնվեն մի քանի անհրաժեշտ պայմաններ, որոնք կապ ունեն գործի կանոնաւոր և նպատակայարմար կազմակերպութեան հետ։

Գլխաւոր պայմանները, որոնց վրա հարկաւոր ենք համարում առանձին ուշադրութիւն դարձնել, սրանք են։ Երկաթուղու վարչութիւնը պէտք է պատրաստ ունենայ բաւականաչափ թուով թէ փակ և թէ կիսաբաց վագոններ անասուններին զետեղելու համար և տեղափոխութիւնը պէտք է կատարի ամենակարճ միջոցում։ Այդ վարչութիւնը պէտք է հոգ տանի յայտնի տեղերում ունենալ ջրի մեծ ամբար, որպէս զի ճանապարհորդող կենդանիները կարողանան ժամանակին յագեցնել ծարաւը։ Երկաթուղու այն գլխաւոր կայարանների մօտ, որտեղից կենդանիները բարձվելու են վագոնների մէջ, պէտք է յատկացրած լինի անասունների համար բաւականաչափ մեծ տարածութիւն, որպէս զի նրանք կարողանան այնտեղ թէ հանգիստ առնել և թէ սպասել նշանակված գնացքներին։ Այդ տեղերում պէտք է լինեն տրօտատեղեր, խոտի պաշարներ, բաւականաչափ ջուր և յատուկ բաժանմունքներ վարակված անասուններին կըղզիացնելու և կարանտինի մէջ պահելու համար։

Անշուշտ պէտք է հոգ տարած, որ կենդանիների թէ կայարաններում պահելը և թէ երկաթուղով տեղափոխելը չը պահանջի տնասելի մեծ ծախքեր, այլ էժան նստի անասնատիրոջ վրա և նա ստիպված չը լինի ձեռք վերցնել իր արհեստից նրա չափազանց թանդ և բազմախնամ լինելու պատճառով։ Այդ մանաւանդ կարևոր է աչքի առաջ ունենալ մեր երկրում, որտեղ դեռ չէ վերջացել թափառական կեանքը և մարդիկ սովոր են կենդանիների տեղափոխութեան համար ոչ մի ծախք չանել։

Ցայտնելով մեր նկատողութիւնները այդ հարցի մասին, որ մեծ նշանակութիւն ունի թէ գիւղական ազգաբնակութեան և թէ քաղաքում ապրող և միւս սպառող ազգաբնակութեան համար, կարևոր ենք համարում, որ մեր անասնապահները, ընդունելով եղած կարգադրութեան անհրաժեշտութիւնը, իրանց կողմից ջանք գործ դնէին նրան դարձնելու նպատակայարմար կարելին չափ։ Դրա համար պէտք է հետևել գործի կազմակերպութեան և նկատած թերութիւնների ու կարիքների մասին յայտնել անմիջապէս պատշաճաւոր հաստատութիւններին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

«Մշակի» անցեալ համարներից մէկում մենք քաղաքական խոշոր երևոյթների կարգում դրինք և այն հանգամանքը, որ Փոքր Ասիան ակնյայտնի կերպով ընկնում է Գերմանիայի ձեռքը։ Նուաճումը, ինչպէս գիտենք, երկաթի և արիւնի միջոցով չէ կատարվում, այլ խաղաղ, միանգամայն «բարեկամական» ճանապարհով։ Բաւական էր համբուրվել կարմիր սուլթանի հետ, անուանվել բոլոր ուղղափառատների բարեկամ, խոստանալ աջակցութիւն այն մշտական դըժգոհութիւնների դէպքում, որոնք յարուցանվում են նեխված թիւրքական բէժիմի դէմ ստրկացած քրիստոնեաների կողմից—և պատրաստ է յաղթութեան այնպիսի մի փառաւոր դաշտ, որին դուցէ չը նմանվի նոյն իսկ Սեդանը։ Եւ իրաւ, «Новое Время» լրագիրը մի մեծ առաջնորդող յօդուածում ցոյց է տալիս, որ Փոքր Ասիայի մէջ ձեռք բերած աջողութիւնները Գերմանիայի համար կարող են համաշխարհային տիրապետութեան պատուանդաններ դառնալ։ Դէպի արևմուտք և դէպի արևելք Գերմանիան չէ կարող լայնացնել իր սահմանները, որովհետև սեղմված է երկու հզօր պետութիւնների մէջ։ Մնում է ճանապարհը դէպի հարաւ։ Այդտեղ նրա ճանապարհի վրա է քայքայվող Աւստրիան. և եթէ հարց լինի թէ ով պիտի ժառանգէ աւստրիական կայուածքը, ի հարկէ, ամենից առաջ դուրս կը կայ Գերմանիան. այդտեղից արդէն շատ հեռու չեն թիւրքաց նեղուցները, որոնց վրա հաստատվելով, Գերմանիան իր ձեռքում կունենայ երեք աշխարհների—Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկայի վերաբերմամբ այնքան կարևոր նշանակութիւն ունեցող դիրքը։ Այդ ձգտման այժ կը տայ այն հանգամանքը, որ Գերմանիան արդէն կարևոր շահեր է ստեղծել Փոքր Ասիայում։ Քաղաքական տիրապետութեան այն հեռանկարը ապագայի գործ է. իսկ ապագայի վերաբերմամբ առհասարակ անսխալ գուշակութիւններ չեն լինում։ Թողնենք ֆանտազիան, թէև նա միայն ռուս լրագրի առաջ չը լինի նկարված, այլ նոյն իսկ գերմանական քաղաքագէտների համար էլ դոյութիւն ունենայ։ Վերցնենք իրականութիւնը։ Դա այն է, որ գերմանացիները կառուցանում են երկաթուղի Բաղդադի վրայով մինչև Պարսից ծոցը։ Այդ նշանաւոր ձեռնարկութիւնը տնտեսական անգին նշանակութիւն կունենայ Արևելքի համար և, ինչպէս ապացուցանում է ղու վարչութիւնը պէտք է պատրաստ ունենայ բաւականաչափ թուով թէ փակ և թէ կիսաբաց վագոններ անասուններին զետեղելու համար և տեղափոխութիւնը պէտք է կատարի ամենակարճ միջոցում։ Այդ վարչութիւնը պէտք է հոգ տանի յայտնի տեղերում ունենալ ջրի մեծ ամբար, որպէս զի ճանապարհորդող կենդանիները կարողանան ժամանակին յագեցնել ծարաւը։ Երկաթուղու այն գլխաւոր կայարանների մօտ, որտեղից կենդանիները բարձվելու են վագոնների մէջ, պէտք է յատկացրած լինի անասունների համար բաւականաչափ մեծ տարածութիւն, որպէս զի նրանք կարողանան այնտեղ թէ հանգիստ առնել և թէ սպասել նշանակված գնացքներին։ Այդ տեղերում պէտք է լինեն տրօտատեղեր, խոտի պաշարներ, բաւականաչափ ջուր և յատուկ բաժանմունքներ վարակված անասուններին կըղզիացնելու և կարանտինի մէջ պահելու համար։

Անշուշտ պէտք է հոգ տարած, որ կենդանիների թէ կայարաններում պահելը և թէ երկաթուղով տեղափոխելը չը պահանջի տնասելի մեծ ծախքեր, այլ էժան նստի անասնատիրոջ վրա և նա ստիպված չը լինի ձեռք վերցնել իր արհեստից նրա չափազանց թանդ և բազմախնամ լինելու պատճառով։ Այդ մանաւանդ կարևոր է աչքի առաջ ունենալ մեր երկրում, որտեղ դեռ չէ վերջացել թափառական կեանքը և մարդիկ սովոր են կենդանիների տեղափոխութեան համար ոչ մի ծախք չանել։

Ցայտնելով մեր նկատողութիւնները այդ հարցի մասին, որ մեծ նշանակութիւն ունի թէ գիւղական ազգաբնակութեան և թէ քաղաքում ապրող և միւս սպառող ազգաբնակութեան համար, կարևոր ենք համարում, որ մեր անասնապահները, ընդունելով եղած կարգադրութեան անհրաժեշտութիւնը, իրանց կողմից ջանք գործ դնէին նրան դարձնելու նպատակայարմար կարելին չափ։ Դրա համար պէտք է հետևել գործի կազմակերպութեան և նկատած թերութիւնների ու կարիքների մասին յայտնել անմիջապէս պատշաճաւոր հաստատութիւններին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

—

(Նամակ Թէհրանից)

—

Ռուսաց Թագաւոր Կայսրի հրամանը այս տարվայ ապրիլ ամսի 16-ից, որով արգելվում է պարսկական դրամի մուտքը թէ Անդրկովկաս և թէ Միջին-Ասիա, աւելի պէտք է ծանրացնէ դրամական այն տագնապը, որով տառապում է ամբողջ Պարսկաստանը տասն տարուց ի վեր։ Շահի կառավարութիւնը աշխատեց, միջոցներ գործ դրեց, որպէս զի Կայսերական այդ կարգադրութիւնը յետ առնվի կամ գոնէ յետաձգվի մի քանի տարի նրա գործադրութիւնը, բայց միջնորդութիւնը չը յարգվեց և ներկայ մայիսի 1-ից բոլորովին արգելվեց դրամի մուտքը Պարսկաստանից Անդրկովկաս և Միջին-Ասիա։

Որպէս զի հասկանալի լինի, թէ ռուսաց ֆինանսների մինիստրի այդ կարգադրութիւնը ինչու պէտք է աւելի ծանրացնէ Պարսկաստանի դրամական տագնապը, մեզ հարկաւոր է մի քանի բացատրութիւններ տալ։ Այդ բացատրութիւններից ընթերցողները կարող են մի և նոյն ժամանակ մի գաղափար կազմել Պարսկաստանի ֆինանսական վիճակի և սիստեմի մասին։

Ամենահին ժամանակից, գոնէ Սէֆէվիների ժամանակից սկսած, Պարսկաստանի դրամական միութիւնն եղել է դրամ կոչված արծաթ դրամը, որ հաւասար է եղել հազար դենստի կամ քսան շահի (շահին հաւասար է եղել 50 դենստի) սև (պղնձէ) դրամի։ Ներկայ 19-րդ դարի սկզբից դենստ կոչված փոքր փողն արդէն անհետացած էր և միայն անունը կար. իբրև սև կամ պղնձէ փող գործածական էր շահին, որի քանը հաւասար էր մի դրանի։ Ռուսական դրամով դրանը արժէր երեսուն հինգ կոպէկ. նա մի փոքր կլորակ արծաթ էր և նրա մէջ պղնձի խառնուրդը 5%-ի համեմատութեամբ էր, այսինքն ամեն մի հարիւր մսխալ արծաթ փողը կամ դրանը բաղկացած էր 95 մսխալ զուտ արծաթից և 5 մսխալ պղնձից. այդպիսի արծաթ դրանը, որ երկիր տանէիր հետդ, միշտ կարող էր իր արժէքն ունենալ, որովհետև ծախվելով իբրև արծաթ, նա կը տար իր գինը—35 կոպէկ, կամ նրան կարելի էր փոխել ոսկու հետ։ Տասը դրանը կազմում էր մի թուման. կար և թումանանոց ոսկի և եթէ դուք տայիք 10 դրան, կարող էիք ստանալ մի ոսկէ թուման կամ աշրաֆի. եթէ տայիք 200 շահի սև փող, կարող էիք ստանալ 10 դրան և կամ մի աշրաֆի։ Այդ հաշուով ռուսաց նախկին պօլուիմպէրեալը Պարսկաստանում արժէր 20 դրան, թիւրքաց լիրան արժէր 25 դրան, իսկ մի թումանը կամ 10 դրանը ռուսական դրամի վերածելով արժէր 3 ռուբլի 50 կոպէկ կամ 3 ռ. 20 կ. ամենաքիչը։ Եթէ վաճառականը Պարսկաստանից տանէր Ռուսաստան 100 թումանի դրան փող, կարող էր ստանալ 350—320 ռուբլի, նայելով պօլուիմպէրիայի կուրսին. յամենայն դէպս թումանը կամ 10 դրանը 3 ռուբլուց պակաս չէր։

Ուրեմն Պարսկաստանի դրամական միութիւնը հետևեալ կերպով էր—պղնձէ փող՝ շահի, արծաթ փող՝ դրան և ոսկի փող՝ աշրաֆի, իսկ նրանց արժէքն էր $1^1/_2$ կոպէկ, 35 կոպէկ և 3 ռ. 50 կ.։ Ռուսաց մի պօլուիմպէրեալ առնելու համար պէտք էր վճարել 20 դրան։ Այդպէս էր մինչև 80-ական թուականները. դրանից յետոյ այնպիսի մեծ փոփոխութիւններ և ճգնաժամեր առաջ եկան, դրամական սիստեմը և դրամի արժէքը Պարսկաստանում այնպիսի յեղափոխութեան ենթարկվեց, որ այսօր մի դրանը արժէ 18 կոպէկ, իսկ մի թումանը կամ 10 դրան արծաթը արժէ 1 ռ. 80 կ., մինչ մի աշրաֆի ոսկին, այն, որ առաջ արժէր 10 դրան, այժմ արժէ 18 դրան. մի արծաթ դրանը, որ առաջ հաւասար էր 20 պղնձէ շահու, այսօր նրանով կարելի է ստանալ 60 շահի։ Ուրեմն սև և արծաթ դրամը սարսափելի կերպով ընկել և կորցրել է իր արժէքը, իսկ ոսկէ դրամը սաստիկ թանդացել և գինը բարձրացել, որովհետև այսօր ռուսաց մի պօլուիմպէրեալ գնելու համար պէտք է վճարել 44 դրան, մինչդեռ առաջ վճարում էին 20 դրան, մի լիրա գնելու համար պէտք է վճարել 50 դրան, մինչ առաջ վճարում էին 25 դրան։ Առաջ մի թուման տալով, դուք ստանում էիք ռուսաց 3 ռուբլի 20 կոպէկ, այսօր ստանում էք 1 ռ. 70 կամ 80 կ., ուրեմն գրեթէ կէսը։ Դրա համաձայն, այն անձը, որ 15—20 տարի առաջ ունէր, դիցուք, 20,000 թումանի հարստութիւն, որ արժէր այն ժամանակ 60,000 ռուբլի, այսօր այդ նոյն գումարով պիտի ունենայ միայն 30,000 ռուբլի, այսինքն կէսը միայն։ Եթէ երկրում կար, դիցուք, 100 միլիոնի հարստութիւն, այսօր այդ հարստութիւնը իջել է 50 միլիոնի։ Միւս կողմից մթերքները, մանաւանդ կենսական մթերքները, ապրանքը երկպատիկ թանդացել են. եթէ առաջ մի լիտր հացի համար պարսիկ մշակը, գործաւորը վճարում էր 1 դրան արծաթ կամ 20 շահի սև փող, այսօր պէտք է վճարի 2 դրան. մսի լիտրը, որ առաջ արժէր 2 դրան, այսօր արժէ 4 դրան և այդ համեմատութեամբ միւս կենսական մթերքներն ևս։ Դրանից կարելի է եզրակացնել, թէ ինչ ծանր և անտանելի վիճակի մէջ է գըտնվում ներկայումս Պարսկաստանի գիւղական և գործաւոր դասակարգը, որն առանց դրան էլ շատ նախանձելի վիճակի մէջ չէր գտնվում և հասկանալի է ուրեմն, թէ արծաթ դրանի անկումն որպիսի տնտեսական և ֆինանսական ճգնաժամ, խառնաշփոթութիւն և յեղաշրջում առաջ պէտք է բերէր ամբողջ երկրի և ժողովրդի կեանքի մէջ։

Այդ ճգնաժամը աւելի սաստկացաւ Նասրէդդին Շահի մահից յետոյ. պետական դանձարանը այ-

«Новое Время», ամենից առաջ մեծ հարուած կը տայ Ռուսաստանին, սաստիկ զգելով Սիբիրի երկաթուղու առևտրական նշանակութիւնը։ Արևմտեան Եւրոպան Բաղդադի ճանապարհով կը տանէ իր առևտուրը նոյն իսկ հեռաւոր Արևելքի հետ, որովհետև այդ ճանապարհը յարմարութիւններ շատ ունի։

Միջագետքի բնական հարստութիւնները, որոնք այժմ դուրս հանելու ճանապարհներ չունեն, այդ երկաթուղով կը թափվեն հարաւային Եւրոպա, ծանր մնտեսական հարուած հասցնելով մեր հայրենիքին։ Եգիպտոսի, Ցունաստանի և Թիւրքիայի շուկաները, ուր մենք արտահանում ենք տարին 30 միլիոնի հաց և անասնապահութեան մթերքներ, ընդ միշտ կը կորչեն մեզ համար։ Միջին Ասիայում, բամբակագործութիւնը զարգացնելու յոյսերը մեծապէս կը սեղմվեն, որովհետև Միջագետքը կը տայ էժան և հիանալի բամբակի անհուն քանակութիւն։ Հում մթերքների փոխարէն դէպի Միջագետք կը գնան Արևմտեան Եւրոպայի գործարանական արդիւնագործութեան արտադրութիւնները։ Մենք այնքան դժուարութեամբ մի կերպ նուաճել ենք հիւսիսային Պարսկաստանի և Աղանիսստանի շուկաները, բայց դրանք մեր ձեռքից կը գնան, հէնց որ Անատոլիա-Միջագետքի երկաթուղու վրա առաջին անգամ շոգեկառքի սուլոց կը լսվի։ Մենք այլ ևս մեր ապրանքները չենք տանի Պարսկաստան և դեռ հարկադրված կը լինենք ամեն կերպ պաշտպանել մեր սահմանը օտարերկրեայ առևտրի արշաւանքից։ Մի խօսքով, մենք այլ ևս մի բան չենք արտահանի Արևմտեան Ասիայի երկիրները, իսկ այնտեղից առաջվայ նման ապրանքներ կը գան դէպի մեզ։

Այդ մնտեսական ապագան, ի հարկէ, ցանկալի չի լինի ոչ մի ռուս մարդու համար։ Եւ լրագիրը յիշեցնում է, որ երկու տարի առաջ Ռուսաստանը հաւիւ էր կարողացել խաղաղացնել ծայրագոյն Արևելքը, երբ Գերմանիան Կիաո-Չաուի հանրածանօթ դէպքով յուզեց չինական հարցը, որ մինչև այժմ էլ շարունակում է տարաձայնութիւններ մտցնել Անգլիայի և Ռուսաստանի յարաբերութիւնների մէջ։ Այժմ էլ մի և նոյն գործը կատարվում է մերձաւոր Արևելքում։ Գերմանիան ձեռք է առնում Փոքր-Ասիան, իսկ Ռուսաստանին չնորհում է Պարսկաստանը և նոյն իսկ Հնդկաստանը, ուր նստած է լորդ Կըրզոն իր ծրագիրներով։ Եթէ այժմ էլ Ռուսաստանը այն անտարբեր դիրքը բռնէ, ինչպէս Կիաո-Չաուի դէպքում, հետևանքները մի և նոյն կը լինեն։

Գերմանիան պիտի կատարեալ հաւատացում ստանայ, որ status quo-ի մէջ ոչ մի փոփոխութիւն, ոչ մէկին մի նոր իրաւունքը կամ որ և է ձեռնարկութիւնը Փոքր-Ասիայում և մանաւանդ Միջագետքում մենք չենք ճանաչում։ Մեր միջամտութեան ժամանակն ու ձևը մենք մեզ ենք թողնում, բայց որ մեր իրաւունքները այդ երկիրների մէջ կը պահպանվեն ռուսաց ոյժի ամբողջ ծանրութեամբ, այդ թող հէնց այժմից իմանան նրանք, որոնք չափազանց վստահութեամբ պատրաստվում են փող և աշխատանք սպառել այդ ձեռնարկութիւնների վրա։

Այսպէս ահա, այն երկիրները, ուր հաղարաւոր տարիներ առաջ չքեղ կերպով ծաղկած էր մարդկային նախնական կուլտուրան և որոնք ասիական հրէշ նուաճողների ձեռքով լուռ ու ամայի անապատներ են դարձել, այժմեան ժամանակ եւրոպական ազգերի համար մրցութեան դաշտ են ներկայացնում։ Ի՞նչ դուրս կը գայ երկու վիթխարի պետութիւնների շահերի ընդհարումից, այժմ դժուար է գուշակել։ Բայց որ Փոքր-Ասիան ու Միջագետքը այսուհետև աւելի մեծ նշանակութիւն կը ստանան, քան որքան ունէին մինչև այժմ—այդ անուրանալի է։ Թիւրքաց չորացնող, սպանող լուծը, պէտք է յուսալ, կը վերանայ ինքն ըստ ինքեան, երբ կուլտուրական այդքան ուժեղ հոսանքները ներս կը խուժեն վայրենի ցեղերի կամայականութեան մատնված այդ դժբաղդ երկիրները՝ մարդկութիւնը հարստացնելու նպատակով...

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

—

Մայիսի 28-ին

Վարակիչ հիւանդութիւնները դեռ շարունակում են իրանց հունձը, մերթ թուլանալով և և մերթ սուր կերպարանք ստանալով։ Մօտ մի տարի է ահա, որ մեր քաղաքում բուն են դրել ծաղիկ, կարմրուկ, բկուռուցց հիւանդութիւնները, և ուր որ յայտնվում են, այնտեղ անխնայ կոտորում են անմեղ մանուկներին և դեռահաս պատանիներին։ Այդ հիւանդութիւնների հասցրած չարիքների մասին մի թեթև հասկացողութիւն տալու համար բերում եմ մի քանի թիւեր, որոնք քաղված են մեր ս. Փրկիչ եկեղեցու այս տարվայ չափաբերական մատեանից։

Ցունվարից մինչև մայիսի 26-ը ծնվել են երկու սեռից 126 հոգի, իսկ մեռնողներ եղել են, դարձեալ երկու սեռից, 93 հոգի, որ ասել է թէ 4 ամիս 26 օրում մեռել են ծնվածների 70%-ը։ Մեռնողներ ընդհանրապէս ասելով, ի նկատի ունեմ միայն փոքրահասակները։ Այնպէս տուն կայ, որ 8 օրվայ մէջ կորցրել է 5 երեխայ, սկսած 13 տարեկան հասակից, սակաւ չեն 2—3 մեռած երեխայ ունեցողները։ Մեռնողների մէջ չեն երևում քիչ թէ շատ բարեկեցիկ ընտանիքի զաւակներ, որանք հաւիւ թէ բոլոր մեռնողների 5%-ը կազմեն, այն էլ մեռել են այլ և այլ հիւանդութիւններից։ Մահացութեան այսպիսի խոշոր տոկոս դուրս է գալիս ժողովրդի ստորին դասից։ Եւ շատ բնական է։ Կովկասի քաղաքներից ոչ մէկում ժողովուրդն այնպէս աղքատ չէ, ինչպէս մեր քաղաքում։ Այստեղ ժողովուրդն ապրում է ծայրայեղ թշուառ դրութեան մէջ։ Բնակարանները նեղ, խոնաւ և մութեն, որտեղ ամենանպաստաւոր պայմաններ կան հազարաւոր վարակիչ միջոցների համար, որոնք և վարակում են մատաղահաս մանուկներին։ Ինչ ասել կուզի, որ հարուստը այդ կողմից բոլորովին ապահով է։

Ժողովրդի մնտեսական վատթար դրութիւնը ուղղելու մասին չէ իմ խօսքը, բայց, իմ կարծիքով, կայ մի միջոց, որով կարելի է փոքր ինչ թուլացնել հիւանդութիւնը։ Թէպէտ բժշկական գիտութիւնը, որպէս էմպիրիկ գիտութիւն, հաստատ հիմքեր շատ չունի, բայց և այնպէս նրան կարելի է հաւատ ընծայել և հետևելով նրա խորհուրդներին, քիչ թէ շատ թեթևութիւն գտնել։ Սակայն ցաւօք սրտի պէտք է ասել, որ մեր ժողովուրդը շատ տգէտ է և նախապաշարված դէպի գիտութիւնը։ Նա ուրախութեամբ ու սիրով կը լսէ ամեն մի հէքիմի, դալլաքի, և կը կատարէ նրանց մահացուցիչ պատուէրները, բայց երբէք չի լսի բժշկի, որ եթէ չը կարողանայ օգնել, գոնէ չի մեռցնի։ Որ հեքիմներն ու դալլաքները մարդ սպանում են, այդ անտարակոյս է և կան շատ փաստեր. դրա համար է, որ օրէնքը խիստ պատիժ է նշանակել նրանց համար, թէև միշտ աջողվում է նրանց խոյս տալ պատժից, բայց և այնպէս ժողովուրդը դարձեալ նրանց է դիմում։

Այս բանում մեր քահանաների վրա բարոյական պարտք է ընկնում, որ նրանք հիւանդներին այցելելիս՝ իրանց քահանայական պարտաւորութիւնը կատարելուց յետոյ, խորհուրդ տան անպատճառ բժշկի դիմել, միայն եթէ քահանան հիւանդութեան մասին շուտ լսած լինի, և չը թողնեն, որ ամեն տեսակ հմայութիւն ու խենթ ու խելառ դեղեր անեն, ողջ-ողջ մեռցնեն թշուառ մանուկներին։ Չէ՞ որ մանուկը նման է նորածիլ բոյսին, որին պէտք է զգուշութեամբ խնամել և ոչ թէ վայրենի կերպով արորել կամ անխնամ թողնել։

Ժողովրդի պէտքերը զգալով, տեղիս Բարեգործական ընկերութեան յարգելի վարչութիւնը իր միջոցներից մի գումար տուել է բժշկին, որ ձրիապէս այցելէ քաղաքի աղքատ հիւանդների տները։ Ճշմարիտ որ գովելի է վարչութեան գեղեցիկ կարգադրութիւնը։ Սակայն մի բան պէտք էր հոգալ նաև դեղերի մասին։ Փորձը ցոյց է տալիս, որ շատ անգամ բժշկի տուած խորհուրդները մնում են անգործադրելի հիւանդների աղքատութեան պատճառով։ Մինչև իսկ ցանկալի էր մնումդի մասին հոգալ։ Բայց ո՞վ պէտք է հոգայ, և ինչ միջոցներով։ Մեր քաղաքի հարուստների առատաձեռնութիւնը յայտնի է։ Ընդհանրապէս կանոն է, որ երբ մի տան մէջ մէկը հիւանդանում է վարակիչ ցաւով, առողջներին տանից հեռացնում են։ Մեզանում այդ բանը բոլորովին անհնար է։ Իմ կարծիքով, կարելի է հեռացնել հիւանդներին։ Ասածս թող խորթ չը թուայ։ Քաղաքային ապաստարանում կարելի է մի բաժին բանալ, ուր առժամանակ հիւանդներին տեղափոխելով, կարելի կը լինի բոլոր հնարաւոր միջոցներով բժշկել և չը թողնել, որ մէկը միւսին վարակէ։

Ներսէս քահ. Նիկողոսեանց

ՆԱՄԱԿ ԿԱՂԶՈՒԱՆԻՑ

—

Մայիսի 20-ին

Երաշտ եղանակները սկսվել էին մեզանում. գիւղացին մինչև այժմ մի կաթիլ անձրևի երես չը տեսնելով՝ կատարեալ յուսահատութեան մէջ էր։ Անցեալ տարիների խոտաւէտ և բուսակաղութեամբ լի դաշտերը համարեա հազիւ էին կանաչով ծածկվում։ Բայց մայիսի 20-ին այնպիսի մի կարկտախառն անձրև եկաւ, որի նըմանը Կաղզուանը գուցէ երկար ժամանակներից ի վեր տեսած չէ. յորդառատ հեղեղներից կազմվեցին գետեր ու գետակներ, որոնք անկարելի է որ որ և է վնաս պատճառած չը լինեն. 8—9 պուդ ծանրութիւն ունեցող արկղները տաշեղի պէս լողում էին ջրի երեսին։

Տեղիս ջրաբաշխները, իբր թէ անժամանակ համարելով ջրերի կանոնաւոր հերթը վերջնականապէս որոշելու՝ թողնում են, որ կարիք ունեցողը ինքնակամ տանի ջուրը, առանց ի նըկատի առնելու սակայն այն հանգամանքը, որ ամեն մէկը ինքնակամ տանելով ջուրը՝ առիթ է դառնում հարևանի հետ բռնվելու վէճերի և կռիւների, որոնք, իրանց ծայրահեղ դէպքերում՝ ծեծով կամ սպանութեամբ են վերջանում, ինչպէս այդ ցոյց է տուել անցեալի դառն փորձերը։

Մի կողմից եղանակի չորութիւնը, միւս կողմից ջրերի սակաւութիւնը որոշ չափով ազդեցին հացահատիկների գների վրա։ Մի սօմար ցորենը, որ սրանից մի քանի շաբաթ առաջ գիւղերում վաճառվում էր 16—18 բուբլով, այժմ 20—22 բուբլով ձեռք չէ բերվում, թէև պէտք է աւելացնել, որ հացահատիկների այսպիսի յանկարծակի բարձրանալուն ոչ պակաս նպաստեցին և երկու անհատներ, որոնք ուրիշ պարապմունք չը գտնելով՝ դիմել են հետևեալ արհեստին, հաւատացնելով միամիտ ժողովրդին, թէ իրանց միակ նպատակն է էժան գնով ամբարել այստեղ ցորենը, որ յետոյ ուղարկեն իրանց կողմերը, իբր թէ այնտեղի սովատանջ ժողովրդին նոյնպէս էժան գնով բաժանելու համար։ Սա էլ երևի հասարակութեան աչքին թող փչելու մի նոր ձևի աչքակապութիւն է, որը պարտք ենք համարում մերկացնել։ Բանն այն է, որ յիշեալ երկու հարուստ պարոնները եկան մեր կողմերը, և ուղղակի օգտվելով գիւղացիների նեղ վիճակից, առաջնորդվելով լոկ իրանց շահասիրական ձգտումներով, փողի տոպրակներով վազում են գիւղերը. եթէ, օրինակ, սօմար ցորենը արժէ 16—18 բուբլի՝ 20—25-ով առնում, ամբարում են, որպէս զի յետոյ, նայած թէ ինչպէս է պահանջում իրանց անձնական շահերը, կամ տեղն ու տեղը, և կամ իրանց կողմերն ուղարկելով աւելի թանգ գնով ծախեն գիւղացու վրա։ Այս հանգամանքը ուշադրութեան արժանի է մանաւանդ այն տեսակէտով, որ գիւղացին եղանակի չորութիւնից այնքան չէ սարսափում, որքան սարսափում է նա հարուստ աղաների բռնած դիրքից։

Այսօր պարզ է, չորային եղանակ է, վաղը կարող է անձրև դալ, այդ յոյսը գիւղացու համար և՛ լուսիւն է և՛ մխիթարութիւն։ Բայց աղան... նա բռներով փող է բաժանում, նա անգին քանակութեամբ ցորեն է առնում, ամբարում. նշանակում է մի բան գիտէ, սով է, թանգութիւն է։ Բացի սրանից, ինչպէս փորձը ցոյց է տալիս, հետևանքը լինում է այն, որ մի կողմից շատերի սիրտը լցվում է թանգութեան, հաց ձեռք չընկնելու սարսափով, իսկ միւս կողմից, հացատէրերի համար դա մի գլխաւոր փաստ է, որ կրկնապատիկ, եռապատիկ գին պահանջէ։ Ներկայումս կարելի է ասել, Բվիկ, Նախիջևան, Զրջի, Ծպնի և ուրիշ գիւղերում, չնորհիւ յիշեալ աղաների՝ մի տեսակ թանգութեան հոտ է փչում, որը բնականաբար ազդեցութիւն կարող է ունենալ և միւս չրջակայ գիւղերի վրա, եթէ գիւղացիները կը շարունակեն ծախել իրանց արմտիքը։

Ա. Տէր-Ներսէսեան

սօր դատարկ է, երկիրը աղքատացած, հարկերը, տուրքերը որքան էլ ծանր, չեն կարողանում ծածկել պետութեան նոյն իսկ սովորական ծախքերը և այսօր կառավարութիւնը ստիպված է դիմել եւրոպական պետութիւնների օգնութեան՝ փոխառութիւն կնքելու համար։ Զը կամենալով դիմել ոչ ռուս, ոչ անգլիական դրամատէրերի և բանկերի օգնութեան, ապագայում դըժուարութիւններ չը ստեղծելու պատճառով, Մուզաֆֆէրէդդին Շահի կառավարութիւնը դիմեց առաջ բելգիացիներին, խնդրելով 40 միլիոն ֆրանկ փոխառութիւն կնքել, բայց բելգիացիները, իմանալով երկրի վիճակը, պահանջեցին հաստատ գրաւական և այդ գրաւականը, նրանց կարծիքով, այն կը լինի, որ Պարսկաստանի բոլոր մաքսային եկամուտները և առհասարակ մաքսային վարչութիւնը յանձնվի նրանց։ Ինչպէս յայտնի է, պարսից կառավարութեան միակ ապահով և արդիւնաւոր հասոյթը—մաքսային տուրքն է, ուստի եկամտի այդ միակ հաստատ աղբիւրն ևս տալ օտարներին դժուար էր և այդ պատճառով փոխառութիւնը չը կարողացաւ կնքվել։ Այժմ պարսից կառավարութիւնը դիմել է Ֆրանսիային և, ինչպէս հաւատացնում են, մօտերս փոխառութիւնը պէտք է կնքվի։ Փոխառութիւնից ստացվելի 40 միլիոն ֆրանկը կառավարութիւնը պէտք է գործադրի՝ վճարելու մի քանի անհրաժեշտ պարտքեր և պաշտօնեաների ապառիկ ռոճիկները, հետևաբար, այդ փոխառութիւնը դժուար թէ կարողանայ որ և է բարւոքում առաջ բերել երկրի մնտեսական և ֆինանսական տագնապի մէջ։

Բայց ինչից առաջացաւ այդ տագնապը—ահա մի հարց, որ, անշուշտ, հարկաւոր է պարզել։ Ինչ պատճառով արծաթ փողի արժէքն ընկաւ և ոսկին այնքան թանգացաւ, կամ աւելի լաւ է ասել, բոլորովին չքացաւ երկրից։ Տագնապը առաջ եկաւ հէնց այն պատճառով, որ արծաթ փողը չափազանց շատացաւ համաշխարհային վաճառականոցում և նոյնպէս Պարսկաստանի մէջ։ Նրա գինն ընկաւ, իսկ ոսկին, անհետանալով, նրա գինը սաստիկ բարձրացաւ, իսկ այդ երևոյթի ներքին մի պատճառը հետևեալն է։

Պարսկաստանում ամբողջ ֆինանսական սիստեմը հիմնված է կապալառուական դրութեան (откупная система) վրա։ Ամեն մի նահանգի տուրքը որոշված է. դիցուք, Ատրպատականի նահանգի տալիք զանազան տուրքերը հասնում են տարեկան մի միլիոն բուբլու. այդ միլիոն բուբլուց վճարվում են առաջ նահանգի բոլոր ծախքերը, թէ զինուորական և թէ քաղաքացիական, ապա մնացորդը պէտք է մտնի Շահի անձնական գանձարանը. դիցուք, այդ մնացորդը 50,000 բուբլի պէտք է լինի. արդ, նա ով ցանկանում է նշանակվել նահանգի ընդհանուր նահանգապետ, յայտնում է, որ պատրաստ է 50,000 բուբլու փոխարէն տալ 100,000 բուբլի և նահանգը նրան տրվում է վարձու, այսինքն վարձակալ ընդհանուր նահանգապետը պարտաւորվում է հոգալ նահանգի բոլոր զինուորական, քաղաքացիական վարչութիւնների և զօրքի ծախքը և բացի դրանից վճարել Շահին տարեկան 100,000 բուբլի, իսկ դրա փոխարէն նա ինքն է ստանում նահանգի բոլոր հասոյթները, բացի մաքսատան եկամուտներից։ Այդպիսով կենտրոնական վարչութեան գործը շատ թեթևանում է և նրա հոգսերը քչանում են, բայց այդ սիստեմն այն անյարմարութիւնն ունի, ի հարկէ, որ ամեն մի նահանգի ընդհանուր նահանգապետը մի ինքնիշխան կուսակալ է կամ մի փոքր Շահ. նա ստանում է եկամուտ, տուրք, ինչքան կամենում է, նոր տուրքեր, հարկեր է սահմանում, մինչև անգամ մահվան դատավճիռ է արձակում. չէ՞ որ նրան հարկաւոր է այնքան հաւաքել, որ կարողանայ Շահին տալիք 100,000 բուբլին վճարել և այդքան գումար էլ իր գրպանը դնել։ Եւ այդ նպատակին հասնելու համար, նա ևս դիմում է նոյն սիստեմին, այն է իր կողմից վարձու է տալիս նահանգի գաւառները նրանց, որոնք խոստանում են իրանց նախորդներից աւելի տալ։ Բացի դրանից պաշտօնեաների (թէ զինուորական և թէ քաղաքացիական) ռոճիկները վճարվում են ոչ թէ կանխիկ տալով, այլ ռոճկի փոխարէն նրանց յատկացնվում է այս և այն գիւղի տարեկան տուրքը, կամ, ինչպէս ընդունված է ասել, գիւղը նրանց թիուլ է տրվում։

Թիուլի սիստեմը, ինչպէս յայտնի է, վաղուց գոյութիւն ունի Պարսկաստանում և գոյութիւն ունէր նաև մեր Անդրկովկասում։ Կան ֆինանսիստներ, նոյն իսկ եւրոպացիներից, որոնք բրոշիւրներ տրատարակելով գովում են պարսկական այդ ֆինանսական սիստեմը, առարկելով, որ չնորհիւ այդ սիստեմի, պետութեան կենտրոնական վարչութիւնը հնարաւորութիւն է ստանում տարեկան մի մեծ գումար դնել գանձարանում, իսկ երկրի պետական ծախքերն ևս հոգացվում են և կառավարութիւնն ևս պարտքի տակ չէ ընկնում։ «Պարսկաստանը—ասում են այդ ֆինանսիստները—միակ երկիրն է աշխարհիս վրա, որ պետական պարտք չունի և այդ՝ չնորհիւ իր վարձկալական ֆինանսական սիստեմի։ Բայց միթէ մեծ ապացոյցներ պէտք են ցոյց տալու, որ վարձկալական սիստեմն է եղել և լինում երկրի կատարեալ կործանման, մնտեսական անկման պատճառ. միթէ հարկ կայ համոզելու, որ Պարսկաստանը երբէք չէ կարող վերածնվել, բարգաւաճել, քանի որ գոյութիւն կունենայ այդ կործանիչ սիստեմը, որ միայն միջոց է հայթայթում նահանգապետներին կեղեքելու ժողովուրդը, յղփանալ և երկրի կենսական հիմը մրզել։

Այդ սիստեմի կործանիչ ազդեցութիւնը չափելի կերպով արտայայտվեց նաև դրամական սիստեմի վրա և առաջ բերեց այսօրվայ սոսկալի տագնապը։

Հ. Առաքելեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Մայիսի 28-ին

Մեր քաղաքում էլ կատարվեց Պուշկինի ծննդեան 100-ամեակի հանդէսը: Ռուսաց եկեղեցում հոգեհանգստեան ներկայ էին քաղաքային աւագն ու լիազօրները և ամեն մի ուսումնարանից որոշ թիւով աշակերտներ ու աշակերտուհիներ՝ իրանց ուսուցիչներով: Պատարագից յետոյ քաղաքային վարչութիւնը՝ միացած քաղաքային դպրոցի հետ՝ հոգեհանգիստ կատարեց դպրոցի գաւթում, որին ներկայ էին զինուորական և քաղաքացիական ծառայողները, բոլոր տիպ ուսումնարանների երկու սեռի ուսանողները՝ իրանց վարժուհիներով և ուսուցիչներով, ծնողներ ու կողմնակի անձնաւորութիւններ: Հոգեհանգստից առաջ քաղաքային աւագ պ. Ա. Գրիգորեան յայտնեց ներկայ եղող հասարակութեանը, որ քաղաքային վարչութիւնը որոշել է քաղաքի «Մեծ» անունով յայտնի փողոցը այսուհետև անուանել «Պուշկինեան փողոց», քաղաքի կողմից գրքեր բաժանել տեղական բոլոր ուսումնարանների աշակերտներին ու աշակերտուհիներին և բոլոր լիազօրների ներկայութեամբ հոգեհանգիստ կատարել: Ապա քաղաքային դպրոցի ուսուցիչ Զ. Տէր-Գրիգորեան կարճ ու ամփոփ բացատրեց Պուշկինի նշանակութիւնը: Հոգեհանգստից յետոյ քաղաքային աւագն ու իր օգնականը բանաստեղծի գրուածքներից (Տիխոմիրովի և Պավլենկովի պատկերաղարդ հրատարակութիւններից) մի-մի օրինակ բաժանեցին բոլոր ներկայ եղող աշակերտներին ու աշակերտուհիներին:

Միւս օրը, մայիսի 27-ին, քաղաքային դպրոցում «Պուշկինեան առաւօտ» էր: Հրաւիրված էին միայն զինուորական և մասամբ քաղաքացիական ծառայողները: Տեսչի ճառից յետոյ, աշակերտական խումբը գեղեցիկ երգեց ու կարդաց բանաստեղծի գրուածքներից մի քանի կտոր. ուսուցիչներն էլ ջութակի վրա մի քանի երաժշտական պիէսներ նուագեցին, որը նորութիւն էր մեր քաղաքում: Նոյն օրը, երեկոյեան, քաղաքային դպրոցի գաւթին էին հրաւիրված բոլոր ուսումնարանների աշակերտուհիներն ու աշակերտները և ծնողները: Դրանց էլ Պուշկինի կեանքին վերաբերեալ կամ նրա գրուածքներից վերցրած պատկերներ ցոյց տուին մոգական լապտերով՝ ռուսերէն բացատրութեամբ հանդերձ, որը, սակայն, շատ քչերը հասկացան: Երգեցիկ խումբն էլ երգեց, սակայն պէտք է նկատած, այս անգամ երգեցողութիւնը անփոյթ էր:

Մի փոքրիկ նկատողութիւն: Փողոցը այս կամ այն գործիչի անունով անուանելը ցանկալի և նպատակայարմար է. դրա դէմ մենք ոչինչ չունենք. շատ հեշտ էլ իրագործելի է,— ցուցանակը փոխելը բան չարժէ. բայց եթէ Ախալքալաքի բոլոր փողոցներն էլ «Պուշկինեան» անուանեն, մի առանձին նշանակութիւն չի ունենայ, որովհետև մեր փոքրիկ քաղաքում տեղերը երբէք փողոցների անուններով չեն որոշվում: Չոկ բան է, եթէ «Մեծ» փողոցը, որի վրա կարգով գտնվում են դեղատունը, քաղաքային վարչութիւնը, գանձատունը, պօստ-հեռագրատունը, դաւառական վարչութիւնը, քաղաքային դպրոցի գիւղատնտեսական բաժինը և քաղաքային դպրոցը,—ի պատիւ բանաստեղծի սալայատակէին և ապա անուանէին «Պուշկինեան». լոկ խօսքով դրութիւնը չէ փոխվում. ինչ օգուտ, երբ հալոցի կամ անձրևների ժամանակ պէտք է էլի սարսափելի, անանցանելի ցեխ լինի. մի և նոյն չէ՞ թէ այդ ցեխը ոտտեղ է գտնվում—«Մեծ» փողոցում, թէ՞ «Պուշկինեան»:

Սալլիմեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Սալմաստ, ապրիլի 30-ին

Խոնարհաբար խնդրում ենք սոյն երկտողին մի անկիւն շնորհել «Մշակի» մօտակայ հայաբնակներից մէկում:

Սալմաստի Ղալասար գիւղի երիտասարդութեան նախաձեռնութեամբ հիմնված լինելով սոյն տարվայ սկզբից գրադարան-ընթերցարան, որ նուիրված է մեր անմոռանալի հրապարակախօս Գրիգոր Արծրունու անուան՝ դիժում ենք հայ հեղինակներին, թարգմանիչներին, կամ ժողովրդի մէջ ընթերցանութիւն տարածելու նախանձախնդիր անձանց, չը զլանան՝ առաջիններին իրանց հրատարակութիւններից, իսկ վերջիններին իրանց նուէրներով նպաստելու մեր գրադարանին, որի նպատակն է Պարսկաստանի մի խուլ և խաւար անկիւնում սէր տարածելու դէպի գիրքը և գրաւոր խօսքը, որ այնքան թանկագին է ամեն մի ժողովրդին բարեկամ անձնաւորութեան համար: Նուիրատուութիւնները հրապարակով կը յայտարարվեն ի գիտութիւն նուիրատու անձանց:

Գրքերը կարելի է ուղարկել հետևեալ ապահով հասցէով. Салмастъ (Персія), Армянской библіотекѣ Арцруни въ Каласарѣ.

Նախագահ վարչութեան՝
Հասրաթ Հասրաթեան
Քարտուղար՝ Թադէոս Զօհրաբեան

ՆՈՐԻՑ ԼՈՒՐԵՐ

—

Հիմնվելով Թէհրանից ստացած տեղեկութիւնների վրա, «Voss. Zeitung» լրագիրը հաղորդում է, որ պարսից Շահը խոստացաւ երկարատևել Պարսկաստանում երկաթուղիներ անցկացնելու համար Ռուսաստանին տրված կօնցէսիան, որի դէմ, ինչպէս նորերս հաղորդում էին, անգլիացիները կտրականապէս հակառակ էին:

—

Մենք ստացանք ռուսերէն լեզուով գրված մի թերթիկ «Къ выборамъ купеческаго общаго собранія 6-го іюня 1899 года» վերնագրով: Այդ գրուածքի մէջ քննված են ներկայ վաճառականական աւագ Ե. Դաւիդովի մի քանի մանաւոր գործերը: Գրուածքի նպատակն է ցոյց տալ, որ Դաւիդով իր կոչման բարձրութեան վրա չէ գտնվում և ուրեմն նա չէ կարող նախագահել այն ժողովին, որ պէտք է վաղը, յունիսի 6-ին, կայանայ առևտրական դպրոցի հոգաբարձուներ ընտրելու համար: Չը մտնելով գրուածքի էութեան քննութեան մէջ, մենք կարծում ենք, որ այդ գրուածքը պէտք է երեւան դար այն ժամանակ, երբ վաճառականական աւագի ընտրութեան հարցը հրապարակի վրա էր և որ գրուածքի հեղինակը պէտք է ստորագրէր իր անունը իր բողոքի տակ, որպէս զի այդ հանգամանքը տեղիք չը տար թիւրիմացութիւնների:

—

Մայիսի 18-ին լրացաւ Նոբէլ եղբայրների նաւթային ընկերակցական տան հիմնադրութեան քսանամեակը: Ընկերակցութեան գլխաւոր գործողը հանդուցեալ Լիւդվիգ Նոբէլն էր, իսկ նրա աւագ օգնականը, որ մինչև այժմ վարչութեան նախագահն էր, Մ. Բելեամին: Ընկերակցութեան ընդհանուր ժողովը իր տարեկան նիստում որոշեց Բելիամինի անունով հաստատել մի թոշակ տեխնիկական դպրոցներից մէկում: Նոբէլի ընկերակցութիւնը անցեալ 1898 թուին ունեցել է մուտք 57,032,313 ռուբլի, իսկ ծախք 53,704,618 ռուբլի: Պահեստի դրամագլխին, գլխաւոր ծառայողներին զանազան գումարներ յատկացնելուց յետոյ, մնում է բաժնետէրերին տալու համար $1^1/_2$ միլիոն ռուբլի, որ անում է հիմնական դրամագլխի վրա 10%:

—

Ստացանք «Հաչիւ Գարեգին ք. Բաղդասարեանցի Եկատերինոդար քաղաքում 1897—1899 թ.» անունով գրքոյկը, որ պարունակում է իր մէջ այն գումարների հաշիւը, որոնք ժողովված են եղել Եկատերինոդար քաղաքում գաղթական և աղքատ հայերին խնամելու նպատակով: Գրքոյկը բաղկացած է 29 փոքրադիր երեսից:

—

Մեզ ուղարկված է «Обзоръ Бакинской нефтяной промышленности» за 1898 годъ» հրատարակութիւնը, որ պարունակում է իր մէջ Բագուի նաւթարդիւնագործութեան մասին ամբողջական տեղեկութիւններ 1898 թուի համար: Այդ հրատարակութեան մէջ տեղ են գտել և առանձին գլուխներ Հիւսիսային Կովկասի, Գրօզնայի շրջանի և Ամերիկայի նաւթագործութեան մասին: Գիրքը պարունակում է իր մէջ բազմաթիւ աղիւսակներ և նկարներ: Գիրքը կազմում է մեծադիր մի մեծ հատոր և արժէ 5 ռուբլի:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մեր հարուստներից մէկը, Ե. Բուդաղեան, վճռել է իր վրա վերցնել նոր հայոց եկեղեցու շինութեան բոլոր կամ մեծագոյն ծախսը: Տաճարի նախագիծը պէտք է մշակվի մայրաքաղաքի ճարտարապետների ձեռքով:»

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Ռուսաց գաղթականութեան հոսանքը այստեղ էլ հասաւ. 17 ընտանիք, մօտ 70 հոգուց բաղկացած, եկան Ղուբա Պոլտավայի, Վօրոնէժի նահանգներից, Պեատիգօրսկից և այլ տեղերից և ժամանակաւորապէս տեղաւորվել են «Թափալեար» կոչված տեղում՝ Կարաչայ գետակի ափին: Նրանք խնդրաժատոյց եղան Բագուի նահանգապետին, խնդրելով, որ իրանց համար հողաբաժիններ տրվեն որքան կարելի է շուտով թէ տներ կառուցանելու և թէ վարելու համար: Առ այժմ ապրում են գետնափոր խրճիթների մէջ, որոնք թափվում են անձրևի ժամանակ: Մենք առիթ ունեցանք խօսելու մի մուժիկի հետ, որը ասաց. «53 տարիքին եմ հասել, բայց սեփական հող չունեմ. հողը շատ եմ սիրում և կամենում եմ աշխատել, ապրել նրանով. Ռուսաստանում հողը սակաւ է և այնքան թանգ, որ մատչելի չէ մեզ, գիւղացիներիս, և հողն էլ անբերրի է: Ուրիշ բան է այստեղ. մենք կը հարստանանք, որովհետև ինքը, հողն էլ, հարուստ է»: Պէտք է նկատել, որ ռուս գաղթականները այստեղ հիմնել են Նիկոլաևկա, Բորիսոգլիսկ, Ելենովկա և այլ գիւղերը, բայց այդտեղ գիւղացիները ապրում են աղքատ և կեղտոտ, այն ինչ ծովեզրեայ Միխայլովկա և մալականների Վլադիմիրովկա գիւղերում ապրում են աւելի հարուստ:»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են, որ այստեղ ներկայ աշնանից պէտք է բացվի մի երկդասեան դպրոց պանսիօնով: Դպրոցի ղեկավարներն են մի հմտալսարանական հայ երիտասարդ և մի փորձված մանկավարժ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Նոր-Զուղա, ապրիլի 30-ին

Ուրախութեամբ ծանուցանում ենք, որ կառուցանելի օրիորդաց դպրոցի հանգանակութեան գործը շատ աջող է ընթանում և ելքն աւելի քան զոհացուցիչ կարելի է համարել: Մեր առաջնորդը, ուղելով ժողովրդին բարի օրինակ հանդիսանալ, 1000 ղուան նուիրեց ամենից առաջ, որը շատ լաւ հետևանք ունեցաւ, քանի որ Նոր-Զուղայի նման մի աղքատ տեղում մօտ 19,000 ղուան հանգանակվեց: Ի դէպ է այստեղ յիշել, որ այս առաջին անգամն է, որ նոր-Զուղայեցին իր առատ նպաստով ասպարէզ է դալիս իբրև կրթական գործին համակրող մէկը: Դպրոցի շինութիւնն անմիջապէս սկսելու համար հարկաւոր պատրաստութիւնները տեսնվում են յատուկ մասնախմբի ձեռքով և, որպէս լսում ենք, հիմնարկութեան հանդէսն ևս շուտով տեղի պիտի ունենայ:

Սրբազան առաջնորդը, նկատելով տեղիս քահանաների տգիտութիւնը, ջանքեր է անում վանքի մէջ բանալ մի հոգևոր դպրոց, ուր պէտք է ժողովի բաւական թիւով ուշիմ երիտասարդներ՝ հոգևոր կրթութիւն ստանալու համար: Այսպիսով միայն կարելի է ներկայ աննախանձելի դրութիւնը փոխել և պատրաստել ապագայի համար արժանաւոր քահանաներ: Հնդկաստանի և Զուղայի հայերի լուրջ ուշադրութիւնն եմ հրաւիրում այս կարևոր խնդրի վրա:

Այս տարի Սպահանի նահանգի ցանքերը ընդհանրապէս շատ լաւ են երևում. ժողովուրդն ըստասում է աւելի լաւ օրերի, թէև անցեալ աշնան, երբ ցորենի գինը զրեթէ ամեն տեղ անչափ բարձրացաւ, այստեղ խալվարը 130 ղուանից աւելի չը բարձրացաւ և արդէն իջել է 90 ղուանի:

Նոր-Զուղայեցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Standard» լրագրում տպված է հետևեալ տեղեկութիւնը. «Հօլանդական պատգամաւորների ժողովի անդամ Լիֆտինկի և դոկտոր Կիւպէրի միջամտութեան շնորհիւ, Մինաս Չէրազը կը խօսի իր դասախօսութիւնը Ամստէրդամում Հայաստանի և հայերի մասին: Կիւպէր ձախակողմեան հակայեղափոխական խմբի պարագլուխ է, իսկ Լիֆտինկ ծայրայեղ ազատամիտ է: Թիւրք պատուիրակները պէտք է, որ շատ վատ զգան իրանց, լսելով այդ թոյլատրութեան մասին: Ինչ վերաբերում է Հօլանդիայի արտաքին գործերի մինիստրին, որը նորերս ստացաւ Օսմանիէ շքանշանը, նրա դրութիւնը աւելի և աւելի դժուարանում է»:

—Կ. Պոլսից, մայիսի 27-ից (յունիսի 2) հաղորդում են «Kénigsberg. Hart. Zeitung» լրագրին, որ սուլթանը շատ ծանր հիւանդացել է:

—Անգլիական համայնքների ժողովը, ձայների նշանաւոր մեծամասնութեամբ, վճռեց Սուդանը նուաճող լորդ Կիտչէնէրին պարգև տալ 30,000 ֆունտ ստերլինգ դրամ (մօտ 750,000 ֆրանկ): Խօսելով Կիտչէնէրին պարգև տալու մասին, Բալֆուր, ի միջի այլոց, գովեց նրան այն բանի համար, որ նա քաղաքականութեամբ չէր զբաղվում, այլ կատարում էր միայն իր զինուորական պարտաւորութիւնը: Դիմադրական կուսակցութեան ներկայացուցիչ Մորլէյ պախարակում էր Կիտչէնէրին այն բանի համար, որ նա բարբարոսաբար էր վարում պատերազմը և պղծեց Մահդիի գերեզմանը: Ինքն Կիտչէնէր Մորլէյի ճառի ժամանակ շատ սառն կերպով նստած էր պէրերի օթեակում:

—Լրագիները հաղորդում են, որ Լօնդօնում և Պարիզում սարսափելի շոքեր են տիրում: Լրագիրները անդադար հաղորդում են քաղաքային փողոցներում արեգակը խփելու դէպքերի մասին:

—Կ. Պոլսից ստացած պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա, «Int. Corr.» լրագիրը հաղորդում է, որ Կրետէից գաղթել են 17,000 մահմեդականներ: Սուլթանը կտրական կերպով հրաժարվեց հարկադրել այդ մահմեդականներին վերադառնալ կղզին: Մինիստրների խորհուրդը միջոցներ է ձեռք առնում բնակեցնելու նրանց փոքր-ասիական վիլայէտներում, և սուլթանն ևս 10,000 ոսկի նուիրեց գաղթականներին: Այդպիսի միջոցը, աւելացնում է թղթակիցը, միայն կը խրախուսէ մահմեդական կրետացիներին շարունակելու իրանց գաղթումը:

—Անգլիացի Աշմէդ-Բարտլէտին երեք կօնցէսիաներ են տրված Թիւրքիայում, մէկը էլէկտրական երկաթուղի անցկացնելու համար Սօլունում, երկրորդը՝ այդ քաղաքը էլէկտրականութեամբ լուսաւորելու համար և երրորդը—էլէկտրական երկաթուղի անցկացնելու համար: Զմիւռնիան էլէկտրականութեամբ լուսաւորելու կօնցէսիան աշխատում է ստանալ մի գերմանացի, որին պաշտպանում է գերմանական դեսպանատունը:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

3 յունիսի

ՏԱՄԲՕՎ: Երկարատև չորութիւնից և ցրտերից յետոյ, կանգնեց տաք, մինչև անգամ շոգ եղանակ: Ընդհանրապէս բերքի լաւ յոյսեր կան:

ՐԻԲԻՆՍԿ: Այսօր, գիշերը, քաղաքի մօտ այրվեց մի տուն, որի մէջ այրվեցին 11 բանուորներ:

ՎԱՐՇԱՎԱ: «Գիօցէֆիրա» տպեց մի կոչ, ստորագրված 12 բաբբինների կողմից, որի մէջ հրաւիրում են հրէաներին նուիրատուութիւններ անել յօգուտ անբերրիութիւնից վնասվածների:

ՊԱՐԻԶ: Բոլոր լրագիրները Պուանկարէի բազմաթիւ քայլերի մէջ տեսնում են դիտաւորութիւն՝ չը շեղվել միասիայից: Նրանց նշանաւոր մեծամասնութիւնը այն համոզմունքն է յայտնում, որ այդ քայլերը նրան նպատակին կը հասցնեն: Մի քանի լրագիրներ հաւատացնում են, սակայն, որ Պուանկարէի հետ կօմբինացիան ոչինչ հետևանքի չի հասցնի: Պահպանողականներն ասում են, որ Պուանկարէի անաջողութեան պատճառը արմատականների անչափ պահանջները կը լինեն, որոնք կամենում են նշանաւոր պօրտֆէյլներ ստանալ: «Journal» լրագիրը հաւատացնում է, որ Բուրժուա մերժեց արտաքին գործերի մինիստրութեան պօրտֆէյլը, և որ Դէլկասէն, երևի, կը պահպանի այդ պօրտֆէյլը:

ՊԱՐԻԶ: Ուղղիչ ոստիկանութեան դատարանում քննվում է, մեծ բազմութեան ներկայութեամբ, Օտէյլում 8 ցոյց անողների գործը:

ՊԱՐԻԶ: Պուանկարէ առաւօտեան 11 ժամ 15 բոպէին եկաւ Ելիսեան պալատը և հաղորդեց Լուբէին, որ պաշտօնապէս յանձն է առնում մինիստրութեան կազմակերպութիւնը: Թէպէտ դեռ ևս խօսակցութիւն չը կայ պօրտֆէյլները բաժանելու մասին, բայց ասում են, որ Պուանկարէ դիտաւորութիւն ունի իր ձեռքում պահել զինուորական մինիստրութեան պօրտֆէյլը:

ՊԱՐԻԶ: Լուր է պատում, որ Պուանկարէ ուզում է առաջարկել Բիբօին ժողովրդական լուսաւորութեան մինիստրի պօրտֆէյլը, Սարրիէին—ներքին գործերի, Մենիսին—արդարադատութեան: Ելիսեան պալատից դուրս գալուց յետոյ, երբ հարցրին Պուանկարէին, նա յայտնեց, թէ յոյս ունի աջողութեան հասնել և վերադառնալ 6 ժամին Ելիսեան պալատը՝ հաղորդելու Լուբէին իր բանակցութիւնների ընթացքի մասին:

ՊԱՐԻԶ: Միջնորդ դատարանը, որին յանձնարարված է որոշել անգլիական Գվիանայի սահմանը, գումարվեց առաւօտեան արտաքին գործերի մինիստրութեան մէջ, Մարտէնսի նախագահութեամբ: Դէլկասէ, ողջունելով դատարանի գումարված անդամներին, ասեց, որ ներկայ դատարանը նորից գործնականապէս կը որբագործի այն ամենու գաղափարը, որը իջնելով Օգոստափառ գահից, արագ կերպով ճանապարհ բացեց իր համար ժողովուրդների սրտի և գիտակցութեան մէջ:

ՊԱՐԻԶ: Ուղղիչ ոստիկանութեան դատարան: Նախագահը հարց ու փորձի է ենթարկում Դիոնին, որը պնդում է, թէ ինքն իրաւունք ունէր «կեցցէ զօրքը» աղաղակել և ցոյց տալ Լուբէին, որ կան և այնպիսիները, որոնք նրան չեն շողոքորթում: Դիոն և ուրիշ մեղադրվողները յայտնում են, որ ցոյց անելու համար չէին եկել Օտէյլ: Նրանք աղաղակում էին ի պատիւ զօրքի

և դրա համար ենթարկվեցին քսանմեկի վարմունքին ոստիկանության կողմից։

4 յունիսի

ՍՏՈԿՀՈԼՄ։ Հիդրոգրաֆիայի և բիոլոգիայի միջազգային համագումար ժողովը բացեց ներքին գործերի մինիստր Կրուզենշտէրն։

ՊԱՐԻԶ։ Ուղղիչ ոստիկանության դատարան։ Մեղադրվողների հարցափորձը աւարտվեց առանց միջնադէպքերի։ Սկսվեցին վկաների ցուցմունքները։ Կօմիսար Տունի յայտնում է, որ չէ կարող ասել, թէ ով իրան խփեց։

ՄԱԴՐԻԴ։ Գաժաղ կաթուածահար եղաւ։

ՊԱՐԻԶ։ Պէյտաւ, հանգստութեան կաբինը զգալով, հրաժարվեց ֆինանսների մինիստրի պօրտֆէյլից։

Ուղղիչ ոստիկանության դատարան։ Ցաջորդ վկաները յայտնում են, որ մեղադրվողների թւում չեն տեսնում այն անձանց, որոնք հարուածներ էին հասցնում։ Տունի և ուրիշ ագէնտներ աննշան ցուցմունքներ են տալիս։ Պրոկուրորի օդնականը իր ճառի մէջ խիստ պատիժ է պահանջում։ Սկսվում են պաշտպանողական ճառերը։ Փաստաբանները պահանջում են արդարացնել մեղադրվողներին, սրովհետև, նրանց խօսքով, ոչ զաղտնի ապստամբութիւն է եղել, ոչ էլ նախամտածած գործողութիւն։ Նիստը յետաձգված է վաղվան։

ՊԱՐԻԶ։ Ժամը 7-ին Պուանկարէ գնաց նախագահ Լուբէի մօտ և հաղորդեց նրան, թէ ինքն ինչ է աշողեցրել ամբողջ օրվայ ընթացքում։ Մինչև այդ՝ նա տեսակցութիւն ունէր Սարիէնի և Բրիսի հետ։ Վերջինը համաձայնվում է ընդունել ժողովրդական լուսաւորութեան մինիստրի պօրտֆէյլ։ Վաղը Պուանկարէ կը խորհրդակցի Ֆալիէրի և Մոնիսի հետ։

ԲԵԼԳՐԱԴ։ Այստեղ ստացված տեղեկութիւնների համեմատ, սերբ-թիւրքական սահմանի վրա երէկ տեղի ունեցաւ մի ծանր միջնադէպք։ Բազմաթիւ աւազակախմբեր, թիւրքաց կանոնաւոր զօրքերին պատկանող 200 զինուորների հետ միասին, յարձակում գործեցին սերբական սահմանի վրա Եաբլոնիցկի շրջանի մօտ։ Սերբական գիւղացիները զօրեղ դիմադրութիւն ցոյց տուեցին։ Կռիւը շարունակվեց ամբողջ օրը 20 կիլոմեթր տարածութեան վրա սահմանագծի երկարութեամբ։ Երկու կողմից ևս կան սպանվածներ և վիրաւորվածներ։ Ցարձակվողներին, որոնք թուով աւելի շատ էին, աջողվեց տիրելու սերբական սահմանապահ գնդի երեք պահականոցներ և պաշարել երեք գիւղեր։ Սերբական իշխանութիւնները կանոնաւոր զօրքեր ուղարկեցին՝ հրամայելով արտաքսել յարձակվողներին սերբական սահմանից և վերականգնել հանգստութիւնը։

ԼՕՆԴՕՆ։ Պահպանողական օրգանները և «Times» լրագիրը շարունակում են եռանդոտ յօդուածներ տպել Տրանսվաալի դէմ։ Իսկ ազատամիտ և արմատական օրգանները աչխատում են չափաւորել տարաձայնութիւնը։ «Daily Chronicle» լրագիրն ասում է, որ պատերազմ սկսել մի չնչին վէճի համար ոչ միայն ամօթալի կը լինէր, այլ և անմիտ։

ՀԱԱԳԱ։ Այսօր առաւօտեան կայացաւ ենթայանձնաժողովի նիստը Կարմիր Խաչին վերաբերեալ հարցերի մասին։ Զեկուցանող Բէնս, ի նկատի առնելով վերջին նիստում յայտնված ցանկութիւնները, փոփոխութիւններ մտցրեց իր զեկուցման մէջ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

№ 1 գնացքը։		№ 3 գնացքը։	
Բաքուից գուրս է գալիս ցեր.	4 ժ. 15 ր.	գիշ.	12 ժ. 20 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 ժ. 40 „	երե.	6 „ 38 „
Թիֆլ. գուրս է գալիս	„ 9 „ 10 „	երե.	7 „ 37 „
Բաթումի է հասնում երե.	8 „ 32 „	առ.	8 „ 12 „
№ 2 գնացքը։		**№ 4 գնացքը։**	
Բաթումից գուրս է գալիս առ.	9 ժ. 15 ր.	երե.	9 ժ. 05 ր
Թիֆլիս է հասնում երե.	8 ժ. 53 „	առ.	9 „ 45 „
Թիֆլիսից գուրս է գալիս	„ 9 „ 23 „		„ 11 „ 32 „
Բաքու է հասնում ցեր.	1 „ 04 „		„ 6 „ 15 „

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Էնդ հոգու համար	
Թիֆլիսից գուրս է գալիս	7 ժ. առ.
Գիշերում է Մլետում	
Վլադիկավկազ հասնում է	7 ժ. 20 ր. երե.
Վերց հոգու համար (չեն գիշերում)	
Թիֆլիսից գուրս է գալիս	1 ժ. ցերեկ.
Վլադիկավկազ հասնում է	3 „ 25 ր. երե.
	9 ժամ. առ. Պասանաուր
	9 ժ. 20 ր. երե.
	7 ժ. երեկ.
	9 ժ. 50 ր. երե.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇԳԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է առնում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
135—151 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսաւ
ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԳԻՆՆ Է 50 ԿՕՊ.
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝ Тифлисъ, Чавчавадзевская, д. Маркарова № 25-а, Բացում դիմել Хидекель-ի գրավաճառանոցին, ուր վաճառվում է նոյն հեղինակի
„ՀԱՆԱՔ ՈՒ ԴԱՆԱԿ“
հրատարակութեան I գրքոյկը, գինն է 30 կօպ.։
1—5

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լոյս տեսաւ
ԼԷՕ
ԳԼԱԴՍՏՕՆ
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ, 279 Երես.
ԳԻՆԸ 80 ԿՕՊԵԿ
Դիմել՝ Тифлисъ, Общество Изданія Армянскихъ Книгъ.
4—5

Լոյս տեսաւ
Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ
ՀԱՅ-ԲՈՇԱՆԵՐ
(Աղգագրական ուսումնասիրութիւն)
Գինն է 50 կօպ.
Ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում և հեղինակի մօտ։
4—5

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ՝ Այց Թիւրքաց Հայաստանին (սակաւաթիւ), գինը 60 կօպ.
« Ժողովրդի կրթութիւնը ժեզանում, գինը 2 կօպ.։
4—5

Արդէն լոյս է տեսել
ՌՈՍՏՈՄ ԵՒ ՍԱԼՄԱՆ
(Թիւրքահայոց ժողովրդական աւանդութիւն)
Գինը 25 կօպէկ։
Շուտով լոյս կը տեսնէ Մոսկվայում
ԱՌԻՒԾԱՁԵՒ ՄՀԵՐ
Գինը 25 կօպէկ։
Պատրաստ են տպագրութեան համար հետեւեալ նոր երկասիրած ա ժ բ ո ղ ջ ա կ ա ն (գրական ոճի վերածած) աղգային պօէմաները.
ԱՍԼԻ ՄԵԼԻՔ ԵՒ ՍԱՆԱՍԱՐ
Գինը 25 կօպէկ։
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ
(150 մեծադիր էջերից բաղկացած)
Լոյս կը սփռէ Սասունցի պահլաւանների ցեղագրութեան վրա։ Գինը 50 կօպէկ։
ՊՍՏԻԿ ՄՀԵՐ
Գինը 25 կօպէկ։
Հեղինակի հասցէն՝ Шулаверы, Григорію Баласянъ.
3—3

ՄԻ ՀԱՅՈՒԱՊԱՀ
տեղ է որոնում։ Ցանկացողները թող դիմեն՝ Սիօնի փողոց, Տէր-Յակովբեանի խանութում։
(Ե. Հ.) 2—2

ԲԺԻՇԿ ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Մ օ ս կ վ այ ից)
Նախընթաց տարիների պէս կընդունէ հիւանդներին Կովկասի հանքային ջրերում—Պեատիգօրսկում, մայիսի 8-ից։
(Հ. շ.) 7—10

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ
Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը։
Գանձվակայա փողոց, տուն Մարգարովի, № 31։
(Ե. Հ. շ.) 37—100

ԾԱԽՎՈՒՄ Է
Գրաֆսկայա փողոցում, Եարմուկայի մօտ, աւագ-քահանայ Էլիոզովի ԵՐԿՑԱՐԿԱՆԻ ՏՈՒՆԸ. № 10. Տան վրա բանկի պարտք կայ մօտ 14 հազար ռուբլի։ Պայմանների մասին դիմել նոյն տան մէջ, Երէտիանի խանութը։ (Ե. շ.) 2—2

Ա. ԱՍՄԱՆ
„ՆՈՒԱԳՆԵՐ“
Գինն է 10 կօպէկ
Դիմել՝ A. H. Asman. Tauris—Perse.
3—10

11—52 (շ.)

10—11 (ամխ. 6)

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1899 Թ. ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

	Ր.	Կ.
ԶԷՍՍԻԿԱՑԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՕԹՔԸ, թարգ. Գ. Գուշչեանի	—	20
ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՆԳԼԻԱՑԻՆ, Հաուֆի. թարգմ. Շ. Տ.—Ն.	—	5
ՀՐԷԱՑ ԱԲՆԷՐԸ, Հաուֆի. թարգմ. Շ. Տ.—Ն.	—	3
ՍԷԲԷՈՍԻ ՊԱՏՄ. և Մ. Խորենացի, Ստ. Մալխասեանցի	—	40

Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ. կամ Tiflis, (Russie), Société de la publication des livres Arméniens.
8—10

Մատիեանի կառքեր
Պարբերական հաղորդակցութիւն է սահմանած Թիֆլիսի և Բէլի-Կլիւչի մէջ։ Տոմսակները կարելի է ստանալ Թիֆլիսում, Սաղում, տուն № 93։ Այնտեղ կանգ են առնում նաև կառքեր։
(Հ. շ.) 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ յունիսի 4-ից մինչև սեպտեմբերի 1-ը վարչութեան մէջ պարապմունքները սկսվելու են առաւօտեան ժամի 9-ից և վերջանալու են ցերեկվայ ժամի 1-ին։
Փոխառութիւնը կը վերջանայ ժամի 12-ին։
1—1



ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ
Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։

ԲԻՐՕՆ ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ
կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ

ԳԱԶՕ-ՇՈԳԻՒ-ՋՐԱՆՑՔՆԵՐ
Ամեն տեսակ էլեկտրոտէխնիական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տելեֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱՆ ԲԻՐՕ
Ինժեներ Ն. Բ. Պասաէկի
Тифлисъ, Михайловская ул. № 116.
Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.
ՏԵԼԵՖՕՆ № 642.



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԻԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
ամեն տեսակ
տիւրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ։

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
երկաթէ կամուրջներ
և տնակներ։

ՑԷՄԷՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(Ե. Հ. շ.) 8—100

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՑԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 9/21 յունիսի ԱՆԱՏՕԼԻ չոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խոջափարուխովի և Մայսուրաձէ քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին Նեանլին, Սիօնի փող. Տէր-Յակովբեանի խանութում։
Կոլուբիակինսկայա հրապարակ։ ՆՕՎՈՐՕՍՍԻՑՍԿ—պ. Մելխիոր Հերշենզօնին։
(Ե. Հ. շ.) 2—20

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Іюня 1899 г.
Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбеліановская ул., № 27.